

ՎԻԿ. ՎԱՐԴԱՅԱՆ



ՎՈՅ ՈՒ ՇԻՆ  
ՀԱՂԹԵ ՉԻՆ

891.995  
Հ-30


891-990

Կ-30

2011-071

ԱՐ ՎԵԿՏԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա Ռ Յ Ո Ւ Ծ Ի Ն  
Հ Ա Ղ Թ Ե Ց Ի Ն



ՀԱՅՊԵՏՀԱՍՏԱՆ  
ՀՀԿԱՅԱ ԿԿ ԿՐՏ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1940



29/9  
40

В. ВАРТАНЯН  
ПОБЕЖДЕННЫЙ ЛЕВ  
Тип. Арм. ССР, Ереван, 1940 г

Մի ահոելի սրտուտ գտնան,  
Պոչը յերկար, վոնց գավազան,  
Ճանկերը սուր-իսկ փշի պես,  
Անտառի մեջ խոսեց այսպես.

— Իզուր եմ յես այսպես ապօռում,  
Սրան, նրան պատռում, ուտում,  
Ինքս ուժեղ, ամենքից վեր,  
Ինչու պիտի այսպես ապրել:

Զարագուշակ մտքերի հետ,  
Գնաց առաջ ու յեկավ յետ,  
Մի բլուրի վրա կանգնեց,  
Ուժովը մեկ պինդ բղավեց.

— Կենդանիներ՝ ամեն տեսակ,  
Աղվես ու գայլ, արջ, նապաստակ,  
Պետք ե դուրս գամ ես հին վորջից,  
Մի գեղեցիկ քոշը ե պետք ինձ:

Նըրա ձայնից անտառը այն,  
Հանկարծ թնդաց ամպի նման,  
Նապաստակը խիտ թփի մեջ  
Ականջները վերև պարզեց:

Թոշուներն ել բազմաքանակ  
Թողին փախան դաշտերն արձակ,

Կենդանիներն իրար անցան,  
Անմիջապես զգաստացան:

— Յես առյուծն եմ ես անտառի.  
Վաղը և յետ, յեղեք բարի,  
Առած գործիք ամեն տեսակ,  
Լուսաբացին ինձ մոտ կգաք:


Լուսաբացին շուտ յելսն վեր  
Ել նապաստակ, ել արջ ախպեր,  
Ուղտն ահապին, վագրը բոի,  
Զի ու ճագար, փիղը՝ քեռի.

Կապիկ քույրիկ, այծ ու վոչսար,  
Խոզ նազելի, աշխույժ կիստար,  
Հափշտակող գայլ, մուկ ու շուն,  
Իր ձագերով՝ ճերմակ կատուն.

Ընձուղտ, աղվես, կրիա, ըսկյուռ,  
Գոմեշ ու յեզ, կով ու կենգուր,  
Եշ ու ջորի,—սրանք մեկտեղ  
Ճամբար ընկան, ինչպես հեղեղ,—

Վորը բահով,  
Վորը մուրճով,  
Վորն ուրագով,  
Վորը բրչով:

Ուսին դրած-սղոց, քլունգ,  
Տոպրակներով կաղտմբ, վարունգ,  
Որվա պաշար, ամենքն առել,  
Աշխատավոր ձեռք են դառել:



Ես առյուծի հին վորջի մոտ,  
Վոմանք տկոր, վոմանք բոկոտ,  
Ամեն մեկը իրա ձեզին,  
Յեկան, յեկան, ու խռնվեցին:

Զար աղվեալ առանձնացավ,  
Առյուծի մոտ շտապ անցավ,  
Սև գլխարկը գլխից հանեց,  
Մինչ գետինը լուռ խռնարհվեց:

— Մեր գլխի տեր, մեր պահապան,  
Մեր աչքի լույս, չարի խափան,  
Դուրս արի դուրս, աչքովդ տես,  
Վոր աշխատենք ինչպես կուզես:

Հպարտ-հպարտ նա վեր կացավ,  
Կերավ, խմեց ու կշտացավ.  
Բեխերը ցից, փորը փքված,  
Յեկավ խոսեց սաստիկ հուզված:

— Կենդանիներ ամեն տեսակ,  
Աղվես ու գայլ, արջ, նապաստակ,  
Ես աղվեսին, վորպես կտրիճ,  
Յես կարգում եմ կառավարիչ:

Այսուհետեւ դուք միասին  
Պետք ե լսեք խան աղվեսին.  
Յերբ պատճառի ցավ կամ թե վիշտ՝  
Պարտավոր եք տանել ընդմիշտ:

Ես բարձրաբերձ ժայռի խորքում  
Մի գեղեցիկ քոշք եք սարքում,

Ով ինչ հնարք գիտի՝ ապա  
Այս գործի մեջ թող ինձ ցույց տա:  
Սրա ճառը յերբ լսեցին,  
Ամենքն անցան իրենց գործին.  
Շարքով, կարգով—բաժանվեցին,  
Ըստ արհեստի աշխատեցին:

Փիզը անքաց աղիողորմ,  
Ուսին դրեց աժդահա լոմ,  
Շուրջը մի սուր հայացք նետեց,  
Դեպի քարհանք ուղևորվեց:

Դանդաղաշարժ արջը բարի  
Չեր աշխատել մոտ մի տարի,  
Նա յել քարհանք գնալ-գալով,  
Քար եր կրում լայն թիկունքով:

Անտաշ քարեր, փոքրիկ ու մեծ  
Այստեղ, այստեղ մի կերպ դարսեց.  
Այսպես անվերջ ու շարունակ՝  
Թե արեի, թե լուսնի տակ:

Խան աղվեսը շորորալով  
Զայրանում եր գնալ-գալով,  
Սրան, նրան միշտ անպատճում,  
Բերնից հազար խռնքեր թափում...

Մուրճը դրած լայն թիկունքին—  
Մի հեղ յեղնիկ յեկավ ծեզին,  
Մոռանալով անգամ ճաշել,  
Նա սկսեց քարեր տաշել:

Մըկկալով, միրուքը կախ,  
Յեկավ այծը փոշեթաթախ,  
Փոքրիկ մալան ձեռքում պահած  
Չափիչ լարն ել կողքից կապած:

Յերկու ճագար, սրտներում վոխ,  
Կրում եյին ավազ ու հող,  
Ենքան հալվել մաշվել եյին,  
Կարծես տանձի պոչ լինեյին:

Յեխ շաղելով խոզերը գեր  
Հոգնել եյին անջուր, անկեր.  
Մեկը նստեց, քիչ շունչ առավ.  
Խան աղվեսը կրակ դառավ:

Յեկավ սրան—տուր թե կտաս,  
Ել չթողեց մի տեղ պակաս,  
Կտրեց պոչը իր կեռ թրով,  
Թողեց նրան մըռոմըռալով:

Ուզար վերում, կովը ցածում  
Սղոցում են, հա սղոցում.  
Շուրջն ե փոված տախտակ ու թեփ,  
Արկղներով գործիք ու սեպ:

Նապաստակը ծառի տակին,  
Լայն գոզնոցը կապած մեջքին,  
Թաթում մի մեծ շերեփ պահած  
Ճաշ եր յեփում, քըտինք մտած:

Իսկ կապիկը մի նեղ քնջում  
Մեկ գծում եր ու մեկ ջնջում,

Մըթմըթում եր ինքն իրա հետ.  
Նա դարձել եր ճարտարապետ:

Տեսեք կատվին—խալաթ հագել,  
Նա բժիշկ ե արդեն դառել.  
Վորտեղ դժբախտ դեպք պատահեր  
Կատուն այնտեղ պիտի լիներ:

Փոքրիկ շունն ել միշտ մոմոան  
Պատրաստում եր դուռ ու սեղան,  
Խսկ փոչխարը նրա կողքին,  
Աշխատում եր դուրը ձեռքին:

Տես ընձուղտին. ահա անվախ  
Սվաղում ե պատ, առաստաղ,  
Կանգնած հպարտ ու վիզը ձիգ  
Նախշ ե անում շատ գեղեցիկ:

Քար եր կրում ջորին մեջքով,  
Գնում-գալիս ծանր հեքով,  
Զունի դադար, չունի հանգիստ,  
Գոհ եր ջորուց աղվեսը խիստ:

Ավանակն ել միշտ սուս ու փուս  
Զուր եր կրում գիշեր թե լուս,  
Ով պատվիրեր՝ նա անդադար,  
Անխոս ու լուս կերթար, կըգար:

Վոզնիները մի բացատում  
Ծառ ու ծաղիկ եյին տնկում,  
Վոր գեղեցիկ պարտեղ դառնա,  
Լավ ծաղիկներ, մըրգեն տա:

Դե կրիան ել արդեն գիտեք,  
Լավ ե նրան տեղ չուղարկեք.  
Հիսուն քայլով թե տեղ գնար,  
Մի որ այստեղ պիտի մնար:

\* \* \*  
Արյուն, քրախնք իրար շաղվեց,  
Մի գեղեցիկ քոշք կառուցվեց.  
Են անտառում և վոչ մի տեղ  
Այդպիսի քոշք, չկար շքեղ:


— Աշխատավոր ձեռքեր, յեկեք,  
Ճաշ եմ յեփել նստեք, կերեք.—  
Նապաստակն այսպես խոսեց  
Ու շերեփը արագ շարժեց:

Յերկար սեղան դոին մեջտեղ,  
Կերան ճաշը հոտով, համեղ.  
Ով վոր կերավ—նա վեր կացավ,  
Միայն վիզը չ'կաւացավ:

Հեռվից տեսան մեծ առյուծին.  
— Յեկավ, յեկավ,—բղավեցին.  
Կենդանիներն իրար անցան,  
Անմիջապես զգաստացան:

Գոռ առյուծը առաջ ընկած  
Արշավում եր ուռած-փքված,  
Մի գեղեցիկ նժույզ տակին,  
Թաթը դրած ասպանդակին:

Ու յերբ քոշքը նա նշմարեց,  
Կրկին ձիուն ասպանդակեց,



Խսկ յերբ տեսավ քոշքը պատրաստ  
Մեր առյուծը մնաց ապշած:

— Կենդանիներ՝ ամեն տեսակ,  
Յեղնիկ, կապիկ, արջ, նապաստակ,  
Դե այստեղից շուտ հեռացեք,  
Յամն ու վիշտը միշտ մոռացեք:

Նրանք թողին ու հեռացան,  
Յամն ու վիշտը չ'մոռացան.  
Գոռ առյուծը առանձնացավ,  
Սանդուխքներով վեր բարձրացավ:

Վագրեր, գայլեր, բորենիներ—  
Բերում եյին առյուծին կեր—  
Ել կով, ել յեզ, ել գառ, ել եշ,  
Վոչխար ու այծ, ուղ ու գոմեշ:

\* \* \*  
Մի որ ընկած մտքերի մեջ,  
Նա աղվեսին իր մոտ կանչեց.  
— Խնդրեմ ասա, աղվես աղա,  
Ամառանոց պետք ե հիմա...

— Աչքիս վրա, հղոր արքա,  
Մեկի տեղակ յերկուսը կա.  
Յես պատրաստ եմ ծառայելու,  
Քեզ իմ կյանքը նվիրելու:

Այս խոսքերը գոռ առյուծին  
Շատ գուր յեկան. ծիծաղեցին...  
Ու պատվիրեց, վոր նա գնա  
Ու բոլորին շուտ խմաց տա:

Խան աղվեսը, սև գլխարկով,  
Գնաց անտառ շտապ կարգով,  
Յելավ մի մեծ կաղնու կատար.  
Զայնից թնդաց դաշտ ու անտառ:

— Կենդանիներ, ամեն տեսակ,  
Յեղնիկ, կապիկ, արջ, նապաստակ,  
Շնուտ վեր կացեք, յելեք, յեկեք,  
Ամառանոց պետք ե սարքենք:

Ժիր յեղնիկը թփուտի մեջ  
Յեղջյուրները վերև պարզեց.  
— Ամառանոց, մենք չենք սարքի.  
Շնուտ, վայր իջի, կորիր աչքից:  
Լավ ե գուրք ել քրտինք թափեք,  
Վոչ թե խալսի ջանքը լափեք:

Հենց վոր լսեց աղվեսն ես՝  
Վոնց վոր գլխին տաք ջուր լցնես,  
Կաղնուց իջափ, խիստ վրդովվեց.  
Են առյուծին մեկ-մեկ պատմեց:

— Բերեք այստեղ եղ մեծ լլբին,  
Շղթա գրեք չար կոկորդին,  
Ջարդ որ վիշուր արեք նրան,  
Փակ ու կողպեք դրեք վրան:

Ես յեղնիկին մեջտեղ բերին,  
Վզին հսկա շղթա դրին.  
— Տեսեք սրան, ես անպետքին,  
Մի լավ տվեք քթին, մոթին:

Տանջանքներից հալվեց, բմաշվեց.  
 Հետո զրին մի խուցի մեջ  
 Ու փակեցին դուռը խըցի,  
 Վոր այստեղից դուրս չ'փախչի:  
  
 Յերբ յեղնիկը ուշքի յեկավ,  
 Մութն եր արդեն, գիշերն իջավ.  
 Մթության մեջ փոտքի կանգնեց,  
 Յեղջուրներով դուռը ջարդեց:  
  
 Նա դուրս պրծավ գաղտագողի.  
 Փորը դատարկ, խիստ անոթի.  
 Դեպի անտառ նա սլացավ,  
 Երանց ձեռքից մի կերպ պրծավ:  
  
 Այդպես տխուր, մեն ու մենակ,  
 Գնաց նստեց մի ծառի տակ.  
 Յեղջուրներով հողն եր փորում,  
 Լաց լինելով միտք եր անում:  
  
 Ու միրուքը քամուն տալով  
 Մի այժ յեկավ մըկալով.  
 Յերբ նկատեց ես յեղնիկին—  
 Գնաց նստեց նրա կողքին:  
  
 — Ի՞նչ ե յեղել, իմ բարեկամ,  
 Յավդ պատմիր, յես կ'հոգամ.  
 Այսպես տխուր, մեն ու մենակ  
 Ի՞նչ գործ ունես այս ծառի տակ:  
  
 — Են անառակ առյօնծը մեծ  
 Իր վագրերով ինձ ծեծ տվեց,

Տանջվում եյի բանտում անքուն,  
 Հետո թողի, փախա թագուն...

— Վոր այդպես ե—դե վեր կաց, վեր,  
 Յես կ'դառնամ միշտ քեզ ընկեր.  
 Կ'հավաքվենք ամեն կողմից,  
 Վրեժ կառնենք եդ առյօնծից:

Մեր յեղնիկը քիչ հանդարտվեց,  
 Արցունքները աչքից սրբեց.  
 Ու յերկուսով ընկերացան—  
 Յեվ ահագին ճամբա անցան:

Մեկ ել տեսան—գետի ափով  
 Մի փիղ յեկավ ցից կնձիթով,  
 Մինչ ծնկները ջրում խրվեց,  
 Ու կնձիթով կուշտ ջուր խմեց:

Այծն ել կանգնեց ջրի միջին,  
 Խոսեց նրա լայն ականջին,  
 Փիզը նրանց վոր հասկացավ  
 Ինքն ել հուզվեց ու գայրացավ:

— Վոր այդպես ե, յես ել կ'գամ  
 Փղավարի հարված կտամ,  
 Դե գուք պիտեք, ուժս քիչ չի,  
 Ինչու պիտի իզուր կորչի:

Սարից, ձորից մեկ-մեկ յեկան,  
 Շարքով, կարգով ճամբա ընկան.  
 Գոչում եյին, հուզված խոսում,  
 Ամեն խոսքում վիշտ ու ցասում:

Առած մահակ, մուրճ ու կացին,  
Ճամբա չկար, ճամբա բացին,  
Դեղին փոշին ճամբի վրա—  
Բարձրանում եր քուլա-քուլա:

Շարժվող ճամբի ուղիղ կեսին。  
Նկատեցին խան աղվեսին,  
Խան աղվեսը տեղում սառավ,  
Չորս վոտք ուներ, տասը դառավ:

Քամուց արագ նա վազ տվեց,  
Գոռ առյուծին կրկին պատմեց,  
Մեկ պատմում եր, ու մեկ հուզվում,  
Կարծես գլխին ամալ եր դիզվում:

Ինչպես կայծակ սև մութ ամպեց,  
Սրտում կիտված, ահ ու կսկիծ,  
Ես առյուծը յերբ բղավեց—  
Խան աղվեսի լեղին քամվեց:

— Շուտ, վիր կացեք, իմ կտրիճներ,  
Գայլեր, վագրեր, բորենիներ,  
Շտապեցեք, շնուտ դուրս թռեք,  
Նրանց խմբին մի ջարդ տվեք:

Յերկու կողմից դեմ հանդիման,  
Առած մահակ, փոցի ու գերան,  
Բահ ու քլունգ, մուրճ ու կացին,  
Իրար վրա արշավեցին:

— Առաջ, — գոչեց յեղնիկն իդիթ.  
Տրորելով յերես ու քիթ,  
Անտառով մեկ թնդաց «ուռան»,  
Արյուն թափվեց գետի նման:

Ես առյուծի կովողներին  
Արյունալի մի ջարդ տվին,  
Աղվեսին ել մեջտեղ բերին,  
Տուր թե կտաս քթին, բերնին....

Դեռ յեղնիկը գոռում, գոչում,  
Մեծ յեղանն եր ողում ճոճում,  
Հենց վոր հասան քոշքի մուտքին—  
Գոռաց թափով փիղն ահագին.—

— Եր, անզգամ, իջիր արագ,  
Դե շուտ արի հրապարակ,  
Ուր ես մտել խոր տեղերում,  
Թագնվել ես, չես յերևում:

Զայն ձուն չկար. փիղն աժդահա  
Գրոհ տվեց քոշքի վրա,  
Յերկաթապատ դարձասը մեծ  
Կեղկի պես ջարդեց, փշրեց:

Տերեկի պես դողում եր նա՝  
Են առյուծը, չար ու ագահ.  
Ուզեց փախչել նրանց միջով,  
Փիղը բռնեց հաղթ կնճիթով:

Տվին, տվին ամեն կողմից,  
Քաշքեցին գլխից, պոչից,  
Ինչպես հարկն եր, փետրտեցին,  
Մի խոր ձորի մեջ նետեցին:

Եղ որվանից առյուծը ես,  
Գազագել ե հրեշի պես,  
Ինչ տեսնում ե՝ վրա պրծնում,  
Պատառմ, ջարդում, վոխ ե լուծում:

29/9  
26/10



Պատ. իմբագիր՝ Ա. Վահունի  
Տեխ. իմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սըբագրիչ՝ Ա. Զոլախյան



Գլավիտի լիազոր՝ Բ-1107 Հրատ. 4379.

Պատվեր 209. Տիրաժ 5000.

Հանձնված է արտադրության 27 փետրվարի 1940 թ.

Ստորագրված է տպագրության համար 31 մարտի 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0405489

12989

ԳԻՒԸ 70 4.

Հ 50 20

Վ. ВАРТАНՅԱՆ  
ПОБЕЖДЕННЫЙ ЛЕВ  
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г

891.99Հ

Կ-30